25.990

Учебник предприятия

Инициативы развития

334.5
С-24

05 JAN 2010

334.5
Հ-24

ԱՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐՈՆՔ ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՒՊԻ

05.06.2013

25990

134.5
Հ-24 ա

Հաստատված ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից 1927 թ. փետրվարի 11-ին.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. . . . . Սպառողական Ընկերությունը կազմակերպվում է իր անդամների սպառողական ու տնտեսական կարիքները փոխադարձ ոգնությամբ բարելավելու, նրանց նյութական բարոբությունն ու կուլտուրական մակերեվույթը բարձրացնելու համար և նրա նպատակն է իրականացնել սոցիալիստական չինարարության սկզբունքները:

Դատողություն. Ընկերությունը կարող է դադարել նաև իր շրջանի մնացած (վոչ-անդամագրված) ազգաբնակության կարիքներին:

12546-57

ընդհանուր ժողովի կողմից հաստատված հիմունքներով։

2. Առաջին հոդվածում դրված նպատակներն իրականացնելու համար ընկերությունն իրավունք ունի՝

ա) ձեռք բերելու ու վաճառելու գյուղատնտեսության, արհեստի ու գործարանային ամեն տեսակ արտադրություններ, բ) ազգաբնակության մեջ կոմիսսիոն հիմունքներով տարածելու պետական ու կոոպերատիվ արդյունաբերության ապրանքները, գ) հիմնելու ֆերմաներ, ցուցակայաններ, գյուղատնտեսական գործիքների վարձակայաններ, նորոգման արհեստանոցներ և նմանորինակ այլ հիմնարկություններ, դ) դրազվելու հում նյութերի մթերումով ու վերամշակումով, ե) պահելու հում նյութերն ընդունող կայաններ, գրասենյակներ, պահեստներ, բաժանմունքներ ու խանութներ իր գործունեության նպատակներն իրականացնելու համար, զ) ունենալու իր սեփական գյուղատնտեսական, արհեստավորական ու գործարանային հիմնարկները, ը) կատարելու միջնորդական ու կոմիսսիոն առևտրական գործարքներ՝ թե իր անդամների արտադրությունը վաճառահանելու և թե նրանց տնտեսությանը

կարեվոր գործիքներ ու մեքենաներ մատակարարելու համար, թ) իր անդամներին փոխառություններ տալու և նրանցից ավանդներ ընդունելու այլ և կատարելու գրավադնելու և գրավ ընդունելու գործարքներ. ժ) կազմակերպելու հասարակական սննդի հիմնարկներ (ճաշարաններ-թեյարաններ և այլն), ի) հիմնելու գաղութներ, հիվանդանոցներ, սանատորիաներ մանկատներ, լ) հիմնելու ամեն տեսակ այլ հիմնարկներ, վորոնք զարկ են տալիս նոր կենցաղի զարգացմանը, և խ) ազգաբնակության մեջ մղելու կոոպերատիվ գաղափարների պրոպագանդա, վորպիսի նպատակով կարող է հրատարակել ու տարածել կոոպերատիվ թերթեր, թռուցիկներ գրքեր-բյուլլետեններ ու պլակատներ, կարող է բանալ կոոպերատիվ դասընթացներ գրադարան-ընթերցարաններ, ակումբներ, թատրոններ, կինո և այլ կոոպերատիվ կուլտ-կրթական հիմնարկներ։

3. Ընկերությունը վայելում է իրավական անձի բոլոր իրավունքները և իրավասու է օրենական բոլոր միջոցներով գնելու, վաճառելու ամեն տեսակ գույք, կնքելու պայմանագրեր, վորոնց թվում նաև կառուցման, հանձն առնելու ամեն տեսակ պարտականու-

թյուններ, ստանալու, տալու և զեղչելու մուրհակներ, փոխառություններ, կնքելու պայմանագրեր պետական ու հասարակական հիմնարկներում, ինչպես նաև մասնավոր անձանց ու հիմնարկների հետ, հանդես գալու դատարանում հայցվոր ու պատասխանողի դերում:

4. Ընկերությունն իր պարտավորությունների դիմաց պատասխանատու է իր ամբողջ ստացվածքով և բացի դրանից, ներկա կանոնադրության 17-րդ հոդվածով վերոչված այն լրացուցիչ պատասխանատվությամբ, վոր կրում են անդամները:

5. Ընկերությունն իրավունք ունի անդամագրվելու սպառողական ընկերությունների միությանը «ՀԱՑԿՈՊ»-ին և իր նպատակներին համապատասխանող այլ միություններ ու ընկերություններ:

6. Ընկերությունն ունի իր անվանական կնիքը.

7. Ընկերության Վարչությունը գտնվում է . . . . . գավառի . . . . . քաղաքում . . . . . գյուղում.

Բ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ.

8. Ընկերության գործունեությունը տարածվում . . . . . .

Դատողություն. Ընկերությանը կարող են անդամագրվել նաև .....

.....

..... գյուղերի բնակիչները.

Գ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

9. Ընկերությանն անդամագրվել կարող են միայն այն քաղաքացիները, վորոնք ՀՍԽՀ Սահմանադրության որենքներով չեն զրկված խորհուրդների ընտրությանը մասնակցելու իրավունքից:

Դատողություն 1. Ընկերությանը կարող են անդամագրվել 16—18 տարեկան քաղաքացիները ևս, սակայն նրանք չեն կարող մասնակցել Վարչության ու Վերատուչիչ Հանձնաժողովի ընտրությանը վոչ էլ կարող են ընտրվել այդ մարմինների մեջ:

Դատողություն 2. Ընկերության անդամների թիվը չի կարող . . . . հոգուց պակաս լինել.

10. Ընկերությանն անդամագրվելը կատարվում է Վարչության անունով տրված հայտարարությունների հիման վրա:

Դանձարան. Յեթե վարչությունը մերժում է վորևէ մեկին ընկերության անդամ ընդունել, և այդ հակասում է ներկա կանոնադրությանը, դրա դեմ կարելի չէ բողոքել ընդհանուր ժողովին

11. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է մուծել ընկերության դանձարկղը մուտքի վճար « » կոպ. և փայավճար « » ռուբլի.

Դանձարան. Ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի մտցնելու լրացուցիչ փայեր, սակայն այդ հանգամանքը յերբեք վորևէ արտոնություն չի տալիս ընկերության անդամին՝ ընկերության գործերին մասնակցելու և ընկերությունից ոգավելու խնդրում.

12. Ընկերության մուտքի վճար մտցնող քաղաքացիները ընկերության անդամ են համարվում մուտքի վճարը մուծելու՝ որից.

13. Մուտքի վճարը չի վերադարձվում վոչ ընկերությունից կամավոր հեռանալու, վոչ էլ ընկերությունից հեռացվելու դեպքում:

14. Փայավճարը կարելի չէ մտցնել մասամաս, ընդհանուր ժողովի կողմից վորոշված ժամկետներին:

15. Ընկերության անդամագրության իրավունքը, այլ և փայավճարն ուրիշին տալն արգելվում է:

16. Ընկերության անդամների պարտքերի համար հարուցված դատապահանջները չեն կարող ծածկվել փայավճարներով:

17. Ընկերության գործերի համար յուրաքանչյուր անդամ՝ բացի իր փայավճարից, պատասխանատու է նաև այդ գումարի . . . . պատիկ չափով (այսինքն . . . . ռուբլի).

18. Ընկերության յուրաքանչյուր անդամ պատասխանատու է նաև ընկերության այն պարտավորությունների համար, վորոնք առաջացել են նախքան նրա անդամագրվելը.

19. Ընկերությանն անդամագրվելը և ընկերությունից դուրս գալը կամավոր է և կատարվում է գրավոր հայտարարությունների հիման վրա:

20. Ընկերության անդամն ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է հեռացվել ընկերության շարքերից կանոնադրությունը կամ ընդհանուր ժողովի վորոշումները խախտելու կամ ընկերության շահերի դեմ գործելու համար:

Ընկերության այդպիսի անդամներն իրավունք ունեն ընդհանուր ժողովում տալու

իրենց բացադրությունները նախքան նրանց հեռացման հարցի քվեարկումը։

21. Ընկերությունից հեռացված անդամները (հոդ. 20) կարող են կրկին ընդունվել ընկերության շաքերը՝ միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

22. Ընկերությունից հեռացած կամ հեռացված անդամը պատասխանատու յե ընկերության գործերի համար մինչև այն հաշվական տարվա վերջը, վորի ընթացքում նա հեռացել է կամ հեռացվել է ընկերությունից։

23. Ընկերության մեռած անդամների պատասխանատվությունն անցնում է նրանց ժառանգության իրավունքներն ընդունողներին ընդհանուր հիմունքներով։

24. Ընկերությունից հեռացած կամ հեռացված անդամներին ինչպես և մեռած անդամների ժառանգներին, վերադարձվում են նրանց փայավճարները և նրանց հասնող ոգուտը՝ վոչ ուշ քան տարեկան հաշիվը հաստատելուց 3 ամիս հետո։

25. Ընկերության յուրաքանչյուր անդամ անդամագրվելիս ստանում է ներկա կանոնադրության մի օրինակ և անդամագրքույկ, վորի մեջ գրվում են անդամավճարների մուծումները, ավանդների ու փոխառությունների հաշիվները, ընկերությունից կատարած դնումները և ընկերության անդամին հասնող տոկոսներն ու պարգևատրումները։

Դ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

26. Ընկերության միջոցները կազմում են՝ ա) ընկերությունը հիմնվելիս նրան հանձնվող բոլոր գույքն ու ապրանքները, բ) ընկերության փայավճարներն ու մուտքի վճարները, գ) տարեկան զուտ ոգուտների տոկոսային հատկացումները և այլ յեկամուտներ։ Բոլոր այդ միջոցները բաժանվում են՝ ա) հիմնական, բ) փայավճարային, և գ) հատուկ դրամագլուխների։

27. Հիմնական դրամագլուխը կազմվում է ա) մուտքի վճարներից, բ) տարեկան զուտ ոգուտների առնվազն 50%-ի հատկացումներից, գ) այդ գումարների տոկոսներից, յեթե այդ գումարները կամ նրանց մի մասը դրված են շրջանառության մեջ, և դ) այլ պատահական յեկամուտներից։

Դատողություն՝. Հիմնական դրամագլուխը ծախսվում է ընկերության կարիքների համար գույք ձեռք բերելու նպատակով և ընկերության վնասները ծածկելու համար։ Յեթե դրամագլխի մի մասը մնում է ազատ, վերջինս

կարող է դրվել շրջանառության մեջ, և այդ դեպքում նրա վրա ավելացվում է մի ջին բանկային տոկոս.

28· Փայադրամագլուխը կազմվում է փայավճարներից և գործադրվում է ընթացիկ գործարքների համար:

29· Հատուկ դրամագլուխները կազմվում են ա) Ընկերության անդամների հատուկ մուծումներից, բ) զուտ ոգուտների տոկոսային հատկացումներից, գ) ընկերության վաճառած ապրանքների վրա արվող հատուկ հավելումներից, դ) նվիրատվություններից և յե) այդ դրամագլխի շրջանառության մեջ գտնվող մասի տոկոսներից:

Դատողություն. Հատուկ դրամագլուխները ծախսվում են նրանց համար նախավորոշված նպատակներով:

ՅԵ· ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

30· Ընկերության գործերը վարում են՝ ա) Ընդհանուր ժողովը, և բ) Վարչությունը·

ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

31· Ընկերության ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան առնվազն մեկ անգամ: Նրանցից մեկը, վոր տարեկան հաշվետու ժողովն է, հրավիրվում է տնտեսական տարվա վերջում, դեկտեմբերի 31-ից վոչ ուշ·

Դատողություն. Ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել նաև Վերստուգիչ Հանձնաժողովի Հայկոոպի կամ ընկերության անդամների մեկ տասներորդի պահանջով:

Այդպիսի ժողովները Վարչությունը պարտավոր է հրավիրել պահանջը ստանալու որից 2 շաբաթվա ընթացքում, հակառակ դեպքում այդ ժողովները հրավիրվում են Վերստուգիչ հանձնաժողովի կողմից:

32 Ընդհանուր ժողովի տեղի, ժամանակի և որակարգի մասին Վարչությունն առնվազն 3 որ առաջ հայտնում է ընկերության անդամներին՝ փակցնելով ընկերության գրասենյակում, բաժանմունքներում, ձեռնարկություններում և այլ հասարակական հիմնարկներում համապատասխան հայտարարություն·

Դատողություն՝· Ընդհանուր ժողովն իրավասու է քննելու միայն այն հարցերը, վորոնց մասին նախորոք հայտարարված է յեղել:

33· Ընդհանուր ժողովն որինական է, յեթե ժողովին ներկա յեն անդամների առնվազն մեկ յերրորդ մասը:

34· Անդամների որինական թիվ չհավաքվելու դեպքում (33 հոդ·) յերկու շաբաթվա ընթացքում հրավիրվում է յերկրորդ ժո-

գովը, վորի վորոշումներն անկախ ներկա դանվողների թվից որինական են։ Այս մասին Վարչությունը պարտավոր է նախաբդուշացնել իր հայտարարությունների մեջ։

Դատարանություն. Յերկրորդ ժողովում անփոփոխ պետք է մնա այն որակարգը, վոր հայտարարված է յեղել առաջին ժողովի համար։

35. Ընդհանուր ժողովը բացվում է Վարչության նախագահի կամ փոխնախագահի կողմից, ապա ժողովն ընտրում է նախագահություն։

36. Այն ընդհանուր ժողովները, վորոնք հրավիրված են Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից, բաց են անում վերջինիս ներկայացուցիչները։

37. Ընդհանուր ժողովներում ընկերության յուրաքանչյուր անդամ ունի միայն մի ձայն, վորն ուրիշին տալու իրավունք չունի։

38. Ընդհանուր ժողովներում Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներն ոգտվում են ձայնի իրավունքով բոլոր հարցերում, բացի այն դեպքերից, յերբ քննվում են նրանց գործունեության գնահատականի, նրանց ամբողջ կազմը կամ առանձին անհատների դատական պատասխանատվության յենթարկելու և նրանց

աշխատանքների վարձատրության վերաբերյալ հարցերը։

Այս հարցերի քննության ժամանակ նրանք ձեռնպահ են մնում։

39. Ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Վարչության կամ Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից հրավիրված անձինք, այլ և Հայկոոպի ներկայացուցիչները։

40. Բոլոր հարցերն ընդհանուր ժողովում լուծվում են պարզ մեծամասնությամբ և բաց քվեարկությամբ։ Ձայների հավասարության դեպքում հարցը լուծված չի համարվում։

41. Կանոնադրության փոփոխման և լրացման, անդամների հեռացման, ընդհանուր ժողովի լիազորությունները Լիազորների ժողովին տալու, Վարչության անդամներին լիազորությունից զրկելու, նրանց պատասխանատվության և դատի յենթարկելու և ընկերությունը լուծարքի յենթարկելու խնդիրները վճռելիս պահանջվում է ընդհանուր ժողովներին մասնակցողների ձայների յերկու յերրորդի մեծամասնություն։

42. Ընդհանուր ժողովն իրավասու է։ ա)

քննելու և հաստատելու ընկերության գործունեության ծրագրերը, այլ և յերկամուտների և ծախսերի նախահաշիվները, բ) քննելու և հաստատելու Վարչության հաշվեքննությունները, բաշխելու ստացած ոգուտները կամ վորոշելու վնասների չիջեցման կարգը, գ) հիմնելու հանձնաժողովներ՝ վորոշելով նրանց գործունեությունն ու իրավասությունը, դ) հեռացնելու ընկերության գանգատն անդամներին, յե) վորոշելու փայավճարների ու մուտքի վճարների գանձման ժամկետներն ու չափը, զ) վորոշելու վոչ անդամներին ապրանք մատակարարելու պայմաններն ու ապառիկ առեվտրի հիմունքները, ը) վորոշելու փոխառությունների չափը և ավանդների ընդունելության պայմանները, թ) քննելու ու հաստատելու վարկավորման ու փոխառությունների և նրանց չիջեցման պայմանները, ժ) քննելու և հաստատելու սեփական չենքերի կառուցման, գնման ու վաճառման, ապահովագրման կամ գրավ դնելու խնդիրները, ի) հիմնելու հատուկ դրամագլուխներ և հաստատելու վերջինները ծախսելու հիմունքները, լ) քննելու և վորոշելու այլ միությունների և հիմնարկների անդամագրվելու

խնդիրները, խ) ընտրելու Վարչության և Վերատուգիչ Հանձնաժողովի անդամներ և նրանց փոխանդամներ, այլ և վորոշումներ հանելու նրանց լիազորությունների ժամանակը լրանալուց առաջ հեռացնելու կամ դատի յենթարկելու մասին, ծ) վորոշելու ընկերության ընտրովի մարմինների անդամների թիվը և նրանց ռոճիկը, կ) քննելու Վարչության, Վերատուգիչ Հանձնաժողովի և ընկերության այլ որգանների դեմ տրված բողոքները, հ) ընտրելու լիազորներ՝ Հայկոոպի Լիազորական Համագումարին կամ այլ խորհրդակցություններին և ժողովներին մասնակցելու համար, ձ) քննելու և վորոշելու ներկա կանոնագրության փոփոխման կամ լրացման խնդիրները, ղ) լուծելու այլ խնդիրներ, վորոնք բղխում են ընկերության գործունեությունից։

43։ Ընդհանուր ժողովի վորոշումները գրվում են արձանագրությունների հատուկ գրքում և ստորագրվում են նախագահության և ներկա յեղողների տասնվայն 20 հոգու կողմից։

44։ Ընդհանուր ժողովների վորոշումները պարտադիր են նաև բացակա անդամների համար։

45. Ընդհանուր ժողովների վորոշումների վերաբերմամբ ընկերության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի իր առանձին կարծիքը հայտնելու և այդ կարծիքը դրավոր կերպով արձանագրության կցելու յերեք որվա ընթացքում։

բ) ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

46. Վարչությունը հանդիսանում է ընկերության ներկայացուցիչը և վարում է նրա գործերը առանց այդ մասին հատուկ փոխանորդագիր ունենալու։

47. Վարչությունն իրավունք ունի ա) գնելու, պահպանելու և վաճառելու ամեն տեսակ ապրանքներ, հում նյութեր, բ) վաճառելու ամեն տեսակ դույքեր ու արժեքներ, գ) ընդունելու ավանդներ, տալու փոխառություններ և վարելու դրամ ընդունելու և դրամ դնելու գործարքներ, դ) ընդունելու, տալու ու զեղչելու մուրհակներ, ամեն տեսակ պարտավորություններ ընդունելու և հանձնելու, զ) կապալով վերցնելու, գնելու և վաճառելու ամեն տեսակ չենքեր համաձայն ընդհանուր ժողովի վորոշման, ը) պաշտպանելու ընկերության շահերը հասարակական, վարչական ու դատական հիմնարկներում, թ) ընդունելու ու հեռացնելու

ծառայողներին, ժ) տալու փոխանորդագրերը ի) կազմելու ընկերության ծախսերի ու յեկամուտների նախահաշիվը, գործունեության ծրագիրը, տարեկան հաշվետվությունը և հաշվեկշիռը, և այդ ամենը վերստուգիչ Հանձնաժողովի յեզրակացությամբ դնելու ընդհանուր ժողովի քննությանը, լ) վարելու ընկերության հաշվապահությունը և գործավարությունը, խ) պահելու անդամների ցուցակ, ընդունելու նոր անդամներ այլ և հեռացնելու ընկերության այն անդամներին, վորոնք ընտրական իրավունքները կորցնում են, ծ) բանալ դրասենյակներ, պահեստներ, արհեստանոցներ, առևտրական ու արդյունաբերական ձեռնարկություններ՝ համաձայն Ընդհանուր ժողովի վորոշումների, և կ) կատարելու այլ գործեր, վորոնք բղխում են ներկա կանոնադրությունից ու ընդհանուր ժողովների վորոշումներից և չեն վերապահված ընդհանուր ժողովին.—

48. Վարչությունը կազմում է հոգուց, վորոնց ընտրում է ընդհանուր ժողովը ընկերության անդամների թվից մի տարի ժամանակով, նույն ժողովում ընտ-

վում են վոչ պակաս քան յերկու փոխանդամ Վարչության անդամներին փոխարինելու համար։

49· Մեվնույն Վարչության կազմի մեջ չեն կարող ընտրվել ամուսիններ և մոտիկ ազգականություն ունեցող անձինք (յեղբայր ու քույր, հայր ու վորդի, աներ և փեսա և այլն)։

50· Վարչության անդամներն ընտրում են իրենց միջից նախագահ ու փոխնախագահ, և իրենց միջով բաշխում են Վարչության աշխատանքները։

51· Վարչության նիստերն որինավոր են համարվում, յերբ ներկա յեն Վարչության անդամների կեսից ավելին, այդ թվում նաև նախագահը կամ փոխ-նախագահը։ Հարցերը վորոշվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Վարչության նիստերում կազմվում են արձանագրություններ, վորոնք ստորագրվում են նիստին մասնակցողների կողմից։

Ծանոթություն. Վարչության այն անդամը, վոր առանձին կարծիք ունի և Վարչության վորոշումների հետ համաձայն չե, այդ մասին կարող է հիշատակել արձանագրության մեջ, վորով նա ազատվում է վորոշման հետ կապված պատասխանատվությունից։

52· Վարչության անունից տրվող մուրհակները, պայմանագրերը, փոխանորդագրերը և զանազան հիմնարկներին գրամական խնդիրների մասին ուղղվող այլ դիմումները ստորագրում են նախագահը կամ փոխնախագահը և առնվազն Վարչության մի անդամը. մնացած բոլոր գրությունները ու փաստաթղթերը ստորագրում է Վարչության մի անդամը։

53· Ընկերությանը պատճառած վնասների համար Վարչության բոլոր անդամները պատասխանատու յեն համապարտ կերպով։

Զ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ.

54· Վարչության մարմինների գործունեության վրա հսկելու և հաշվեկշիռն ըստուգելու ու քննելու համար՝ ընդհանուր ժողովն ամեն տարի ընկերության անդամներից ընտրում է Վերստուգիչ Հանձնաժողով, առնվազն 3 անդամից և 2 փոխանդամից։

Ծանոթություն. 1. Վերստուգիչ Հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել Ընկերության վարչական որգանների անդամները կամ ծառայողները, այլ և նրանց մոտիկ ազգականները։

Դաճոթություն 2. — Այս կանոնադրության 49, 50 և 51 հոդվ. կիրառվում են նաև Վերստուգիչ Հանձնաժողովի վերաբերմամբ։

55. Վերստուգիչ Հանձնաժողովի պարտականություններն են՝ ա) պարբերաբար քննել ընկերության գանձարկղը, բ) ստուգել ընկերության խանութների, պահեստների, բաժամունքների ձեռնարկությունների, գրասենյակների ապրանքներն ու դույքը, համեմատելով հաշվապահական գրքերի հետ, այդ ստուգումները կատարվում են ընդհանուր ժողովի վորոշմամբ կամ Վերստուգիչ Հանձնաժողովի հայցողությամբ՝ համենայն դեպս տարեկան առնվազն մեկ անգամ, գ) քննել Վարչության դեմ տրված բողոքները և իր յեզրակացությամբ զեկուցել ընդհանուր ժողովին, քննել հաշվապահությունն ու գործավարությունը, յե) յեզրակացություններ տալ ընդհանուր ժողովին տարեկան հաշիվների, նախահաշիվների և ծրագրերի մասին։

Դաճոթություն. Վերստուգիչ Հանձնաժողովն իրավունք ունի իր ստուգողական աշխատանքները հանձնարարելու Վերստուգիչ Հանձնաժողովի առանձին անդամներին։

56. Վերստուգիչ Հանձնաժողովը կատարելով գործունեության մեջ լերեվան

հանած պակասությունների մասին ցուցումներ ե տալիս ընկերության Վարչությանը։ Իսկ յեթե ընկերության գործերում գտնվեն ավելի լուրջ պակասություններ ու չարաշահություններ, Հանձնաժողովն իրավասու յե Ընկերության ընդհանուր ժողով հրավիրելու։

57. Վերստուգիչ Հանձնաժողովի դեմ տրվող բողոքները ներկայացվում են մոտակա ընդհանուր ժողովին՝ Հանձնաժողովի միջոցով և վերջինիս բացատրությամբ։

Ե. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ–ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.

58. Ընկերության հաշվապահությունը տարվում ե Հայկոոպի կողմից սահմանված կարգով։

Դաճոթություն. Ընկերության հաշվապահը չի կարող միաժամանակ վարել գանձապահի պաշտոն.

59. Ընկերության հաշվական տարին ընկվում ե հոկտեմբերի 1–ից և վերջանում ե սեպտեմբերի 30–ին։

60. Յուրաքանչյուր գործառնական տարվա համար Վարչությունը կազմում ե հաշվետվություն, ինչպես նաև նոր սկսվող

տարվա նախահաշիվ և գործունեության ծրագիր:

61. Տարեկան հաշիվն իր մեջ պիտի ամփոփի՝

ա) տարեվերջի հաշվեկշիռը, բ) ապրանքների գնման ու վաճառքի հաշիվը, գ) ոգուտների ու վնասների հաշիվը, դ) զուտ ոգուտի բաշխման նախագիծը, և յե) անդամների թվի և փայավճարների շարժմանը վերաբերող տվյալները: Այս տեղեկություններից զատ հաշվետվությանը կարող են կցվել նաև այլ տվյալներ:

62. Հաշվետվությունը պիտի փակված լինի և Վարչության ու Վերստուգիչ Հանձնաժողովի կողմից ստորագրված վոչ ուշ, քան .....1-ին, և համենայն դեպս ընդհանուր ժողովից 2 շաբաթ առաջ: Ընկերության հաշվետվությունը, գրքերն ու փաստաթղթերը պիտի ցուցադրված լինեն ընկերության գրասենյակում՝ ընկերության անդամների ծանոթության համար:

Ը. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶՈՒՏ ՈԳՈՒՏՆ ՈՒ ՎՆԱՍԸ.

63. Ընկերության զուտ ոգուտից ընդհանուր ժողովը՝ ա) առնվազն 50% հատկացնում է հիմնական դրամագլխին, բ) մնացած ոգուտից փայավճարային գումարներին տալիս է մինչև բանկային տոկոս, գ) պարգևատրում է ընկերության անդամներին նրանց կատարած գնումների ու նրանց տնտեսության արտադրած մթերքների վաճառահանման համար, դ) կատարում է հատկացումներ զանազան կուլտ-կրթական նպատակներով, ինչպես և հիմնում է հատուկ ֆոնդեր:

Դաճարություն. Փայավճարային տոկոսներ են տրվում միայն ամբողջ ամիսների համար և փայավճարը լրիվ մուծելու դեպքում.

64. Թե փայավճարային տոկոսները և թե գնորդներին հասնող պարգևադրումը վճարվում են անդամներին Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տարեկան հաշվետվությունը հաստատելուց հետո՝ յերեք ամսվա ընթացքում: Այն անդամները, վորոնք փայավճարները լրիվ չեն մուծել, այդ հատկացումները կանխիկ չեն ստանում, այլ հաշիվ այդ հատկացումների լրացվում ի նրանց փայավճարը:

Դաճարություն. 1.—Անդամներին հասնող տոկոսներից և պարգևավարձից Ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է կազմել լրացուցիչ փայեր (կամավոր.)

Դանդրություն. 2.— Յեթե անդամները յերեք ամսվա ընթացքում չեն ստանում իրենց հասանելիք տոկոսները ու պարգեվադրամը այդ գումարներից կազմվում են նոր կամավոր փայեր։

65· Յեթե ընկերության հաշվետվությունը փակվում է վնասով, վերջինս ծածկվում է ընկերության հիմնական դրամագլխից, իսկ լրիվ չծածկվելու դեպքում՝ նաև ընկերության պարտադիր փայադրամագլխից։ Այն դեպքում, յերբ այդ յերկու դրամագլուխներով անհնարին է ծածկել ընկերության բոլոր վնասները, ընդհանուր ժողովը բաժանում է մնացած վնասը ընկերության անդամների միջև, համաձայն այն պատասխանատվության, վոր նախատեսված է ներկա կանոնադրության 17-րդ հոդվածով, կամ վորոշվում է լուծել ընկերությունը։

Թ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ.

66· Ընկերությունը կարող է վերջ տալ իր գործունեությանը՝ ա) ընդհանուր ժողովի վորոշմամբ, բ) յեթե ընկերության անդամների թիվը պակաս է.....հոգուց, գ) յեթե ընկերությունը սնանկ է հայտարարվում, դ) դավդրգկոմների վորոշմամբ, համաձայնության գալով Հայկոոպի Վարչության հետ, յեթե ընկերության վարած քաղաքականությունը հակասում է իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին կամ պետական շահերին։

67· Ընկերության գործերի լուծարքը ղեկավարում է Վարչությունը, յեթե այդ նպատակով ընկերության ընդհանուր ժողովը չի ընտրում հատուկ լիկվիդացիոն հանձնաժողով։ Լիկվիդացիայի մասին հայտարարվում է տեղական պաշտոնական լրագրում, այլ և Հայկոոպին։

Դանդրություն. Յեթե ընկերությունը լուծվում է սնանկության պատճառով, Լիկվիդացիոն Հանձնաժողովի կազմը պիտի հաստատվի դատարանի կողմից։

68· Լիկվիդացիոն Հանձնաժողովն առաջնորդվում է Վարչության համար վորոշված կանոններով։

69· Անդամների փայավճարները կամ նրանց մի մասը վերադարձվում են անդամներին միայն այն դեպքում, յերբ ընկերության բոլոր վնասները ծածկված են և բոլոր պարտքերը վճարած, և յերբ Լիկվիդացիոն հանձնաժողովի հաշվետվությունն ընդհանուր ժողովի կողմից հաստատված է։

70· Ընկերության բոլոր պարտքերը վը-

հարելուց ու փայավճարների մնացորդները վերադարձնելուց հետո ընկերության բոլոր իրերն ու գումարները համաձայն ընդհանուր ժողովի վորոշման, հատկացվում են Հայկոոպին ցանցի ուժեղացման ֆոնդի համար:

71. Լուծարքի հաշվետվությունը նույնպես ներկայացվում է Ընդհանուր ժողովին Վերստուգիչ Հանձնաժողովի յեզրակացությամբ:

72. Ընկերության վերջնական փակման մասին հաղորդվում է Հայկոոպին և հայտարարվում է պաշտոնական լրագրում:

Ժ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՈՒՄԸ ԱՅԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

73. Ընկերությունն իրավունք ունի միանալու այլ սպառողական կոոպերատիվ ընկերության կամ ընկերությունների հետ ըստ վորում այդ միացման կարգը, այլ և միացյալ ընկերությունների պատասխանատվության սահմանները դանազան անձանց ու հիմնարկների առաջ, վորոշվում է միացող ընկերությունների ընդհանուր ժողովների կողմից, այլ և սպառկոոպերացիայի մասին գոյություն ունեցող և հետագայում հրատարակվելիք որենքների հիման վրա:

ՀԱՅՊՈՒԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ 1927

Գրաս. 216ր. Պատ. 3488 Տիրաժ 5000

3445

«Ազգային գրադարան»
NL0197860